

ԱՆԱՀԻՏ ԶԱԲԱՐՅԱՆ-ԲՈՂՆԵՆՍԻԵԿԵՐ

ՀԱՅ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԲԱԶՄԱՎԵՊԻՆ» ՆԱԽՈՐԴՈՂ ՇՐՋԱՆՈՒՄ

Մխիթար Սեբաստացին կրոնավորել և մրա աշխարհայացքը ձևավորվել էր Հայաստանի պատմական վանքերում և հիմնելով Մխիթարյան միաբանությունը՝ մա շարունակեց հայ վանական ավանդույթն իր զույգ արտահայտություններով՝ մվիրվել հոգևոր իմացական կյանքի վերանորոգությանը մախնյաց ավանդների շարունակմամբ և երկրորդ՝ անցյալի գրական ժառանգության պահպանմանն ու փոխանցմանը։ Վերջինս եթե ավանդաբար արտահայտվում էր հայ գրչության կենտրոններում ձեռագրերի ընդօրինակությամբ, ապա գյուտեմբերգյան գյուտից հետո հրատարակչական մամուլն արդեն ոչ թե առանձին ձեռագրերով պահպանում, այլ բազմահարյուր և բազմահազար օրինակներով սկսում է տարածել անցյալի գրական գործերը։

Հակոբ Մեղապարտի՝ Վեմեսիկում հրատարակած գրքերից հինգերորդը «Տաղարան» է (1513 թ.), որում գտնում ենք Ֆրիկի և Ներսես Օմորհալու մի շարք ստեղծագործությունները¹։

Քանի որ հայկական տպագրությունը մեծապես եկեղեցական կյանքով էր պայմանավորված, իսկ հրատարակիչներն էլ կան հոգևորականներ էին, կան մրանց կողմից Եվրոպա ուղարկված գործիչներ, իսկ տպագրված գրականությունն էլ գլխավորաբար ուղղված էր եկեղեցական միջավայրին։ Այս պատճառով կատարվող տպագրությունների շարքում տեսակարար մեծ կշիռ էր գրավում ծիսա-արարողական գրականությունը։ Վերջինս ոչ միայն ավանդված էր հենց մախորդ դարերից, այլև եկեղեցական արարողությունների կանոնների մաս կազմող միավորների մի զգալի մասը վերցված էին հայ հին գրականությունից և հատկապես՝ հոգևոր բանաստեղծությունից։

Այսպիսով, ծիսաարարողական գրականության տպագրությունը վերածվում էր մակ հայ հին գրականության մի շարք գործերի հրատարակության։ Ասվածը վերաբերում է թե՛ «Մաշտոց» ծիսարանի կանոններին և թե՛ «Պատարագամատուցին» ու «Ժամագրքին», իսկ 18-րդ դարից մակ տպագիր հրատարակություններով մեծ տարածում գտած «Տաղարաններն» ու «Գանձարանները» մեծապես կազմված են հենց հայ միջնադարյան հոգևոր բանաստեղծություններից։

Հայ մատենագրության տարբեր հատվածների մման ցրիվ հրատարակություններին 17-րդ դարի կեսից արդեն սկսում են հաջորդել առանձին հեղինակների երկերի հրատարակությունները։ Ներսես Օմորհալին է առաջին հայ հեղինակը, ում գործը լույս է տեսել

¹ Տե՛ս Ն. Ռսկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Սավայան, Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Մեղապարտի հրատարակած տաղարանի մկարագրությունը, Երևան, 1988, էջ 8։

առանձին գրքով: 1643 թ. վեճետիկում Հովհաննես Ամկյուրացին տպագրում է Օմորհալու «Հիսուս Որդին»:

1666 թվականին Ամստերդամում լույս է տեսնում Ոսկանյան Աստվածաշունչը, իսկ 1669 թվականը նշանավորվում է դարձյալ Ոսկան Երևանցու տպագրությամբ առաջին հայ պատմագրի՝ Առաքել Դավրիժեցու «Հայոց պատմության» հրատարակությամբ: Այս իրադարձությունը նշանակալից էր նաև նրանով, որ Դավրիժեցին դարձավ առաջին հայ պատմագիրը, ում Պատմությունը հրատարակվեց իր իսկ կենդանության օրոք:

17-րդ դարի վերջին երկու տասնամյակներին հրատարակվելու էին հայ մատենագրության ևս երեք նշանակալից հուշարձանները՝ «Դաշնաց թուղթը»² (վեճետիկ, 1683 թ.), Խորենացուն վերագրվող «Աշխարհացույցը» (վեճետիկ, 1683 թ.) և վերջապես՝ Պատմա-հոր «Հայոց պատմությունը» (Ամստերդամ, 1695 թ.):

18-րդ դարում հաջորդաբար տպագրվում են Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» (Կ. Պոլիս, 1709-10 թթ.), Զենոբ Գլակի և Հովհան Մամիկոնյանի «Պատմություն Տարօնու» (Կ. Պոլիս, 1719 թ.), Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունը» (Կ. Պոլիս, 1730 թ.), Դավիթ Անհաղթի «Գիրք սահմանացը» (Կ. Պոլիս, 1731 թ.), Վիսառոն եղբայրների հայերեն և լատիներեն զուգադիր հրատարակությամբ Խորենացու «Հայոց պատմությունը» (Լոնդոն, 1736 թ.), Լուսավորչին վերագրվող «Հաճախապատում ճառերը» (Կ. Պոլիս, 1737 թ.) Մեսրոպ Վայոցձորեցու «Ներսես Մեծի պատմությունը» (Կ. Պոլիս, 1737 թ.), Սարգիս Օմորհալու «Կաթողիկեայց թղթերի մեկնությունը» (Կ. Պոլիս, 1743 թ.), Խորենացու «Հայոց պատմությունը» և «Աշխարհացույցը» (վեճետիկ, 1752 թ.), Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը» (Զմյուռնիա, 1762 թ.), Եղիշեի «Վարդանանց պատմությունը» (Կ. Պոլիս, 1764 թ.):

Ահա այսպիսին էր հայ դասական մատենագրության հրատարակության ընթացքը, երբ 18-րդ դարի սկզբից հրատարակչական իր գործունեությունն է ծավալում Մխիթար Սեբաստացին: Ինչպես որ նրա հիմնած միաբանությունն իր առաջին քայլերն արեց Պոլսում, ապա փոխադրվեց Մեմֆոն և հետո հաստատվեց վեճետիկում, այնպես էլ Մխիթարի առաջին հրատարակությունները լույս տեսան դեռևս Պոլսում: Այստեղ 1700-1701 թթ. նա հրատարակում է խաչատուր էրզրումեցու «Համառոտ մեկնություն Երգոց երգոյն Սողոմոնի»: 1701 թ. Սեբաստացին Պոլսում հրատարակում է նաև Պետրոս Թիֆլիզեցու թարգմանած «Գիրք մտածական աղօթից»-ը, իսկ 1705 թ.՝ «Խոկումն վարուց»:

Մեթոնում Մխիթարյանները շատ կարճ ժամանակ են մնում՝ չհասցնելով որևէ գիրք հրատարակել, քանի որ վեճետիկի Հանրապետության դեմ Թուրքիայի հարձակումից հետո, թողնելով միաբանությանը հատկացված շինությունները, ապաստան են գտնում վեճետիկում, ուր նրանց հատկացվում է քաղաքի մոտ գտնվող կղզիներից Սուրբ Ղազարը: Վեճետիկում Մխիթարի հրատարակած առաջին գիրքը Կաթողիկե Եկեղեցու նշանավոր հայրերից Ալբերտ Մեծի «Համառոտություն Աստուածաբանութեան» գործն էր: Այն լույս է տեսնում Ամստդի Բորտոլիի տպարանում:

Վեճետիկում 1512 թ. ոչ միայն սկզբնավորվելու էր հայկական տպագրությունը, այլև նույն դարում այստեղ շարունակվելու էր Աբգար դպիր Թոխատեցու (1565-66 թթ.) և Հով-

² Հայ գրականության բնագրերի հրատարակության այս ժամանակագրությունը կազմել ենք ըստ «Հայ գիրքը 1512-1800 թվականներին» մատենագիտության հմատիպ գրքերի մկարագրության:

հաճախ Տերզեցու (1587 թ.) հրատարակություններով: 17-րդ դարում վեճերի կողմնակիցները մի քանի տպարանատերեր տեսնելով, որ հայերեն գրքերի տպագրությունից ևս կարելի է շահ ստանալ, ընդունելով համապատասխան պատվերներ, սկսում են լույս ընծայել մեծ հայերեն գրքեր: Նրանցից մշակավոր էր հատկապես Անտոնի Բորտոլիին, որի տպարանում 1695 թվականից մինչև 1796 թվականը լույս է տեսել 123 ամուն հայերեն գիրք:

Ռաֆայել Իշխանյանն այս տպարանի և մյուս Մխիթարյանների գործերի հրատարակության մասին գրում է. «Այս տպագրատունը հայերեն գրքերի իր հրատարակչական գործունեությունը հիմնականում ծավալեց 18-րդ դարում, գլխավորապես մինչև վեճերի կողմնակից Մխիթարյան տպարանի հիմնադրումը (1789 թ.), երբ այդ քաղաքում հայերեն գրքերի հրատարակության գործը հիմնականում հայկական մորաստեղծ տպարանին անցավ: Ուրոշ ժամանակ «Ա. Բորտոլի» հրատարակչությունը հայերեն գրքեր էլ էր լույս ընծայում իր և Մխիթարյան տպարանի պիտակներով, ապա դադարեց հայերեն գրքեր տպագրելուց: Որքան մեզ հայտնի է, այդպիսի վերջին հրատարակությունը մի «Էֆիմերտե» էր («Գրգուկ որ կոչի էֆիմերտե», 1796 թ.): Իսկ մախքան Մխիթարյան տպարանի հիմնադրումը «Անտոնի Բորտոլի» տպարանն ի թիվս այլոց կատարում էր մեծ Մխիթարյանների տպագրական պատվերները»³:

Սեբաստացու ձգտումը՝ մորաստեղծ միաբանությամբ մպաստել հոգևոր իմացական կյանքի մոռոգությանը և ժողովրդի ընդհանուր կրթությանը, արտացոլվել է մեծ իր կենդանության շրջանի Մխիթարյան հրատարակություններում, որոնցից ամենամեծանակալիցները հենց Մխիթարի հեղինակած գործերն են:

Այբերտ Մեծի հիշյալ «Աստվածաբանությանը» վեճերի կողմնակիցներին հաջորդած մխիթարյան երկրորդ հրատարակությունը 1718 թ. Մխիթար Սեբաստացու «Կրթութիւն աղօթից» գիրքն է: Հաջորդող տարիներին լույս են տեսնում մյուս աշխատասիրած հետևյալ գործերը ևս. «Քրիստոնեական վարդապետութիւն և Այբեմարան» (1725 թ.), «Քրիստոնեական վարդապետութիւն և Տաղարան» (1727 և 1732 թթ. «Քրիստոնեական վարդապետությունը» լույս է տեսնում մեծ աշխարհաբար), «Քերականութիւն գրաբառ լեզուի» (1730 թ.), «Հարցում քերթողական», «Տօմար» (1733 թ.):

Մխիթարի գործերի այս շարքը 1749 թ. պատկերվում է երկհատոր «Բաղդիրք հայկազեան լեզուի» բառարանի առաջին հատորով, որի լույսընծայումը միաբանության հիմնադիր արքայապետի վիճակված չէր տեսնելու: Իր մահից հետո աշակերտները հրատարակում են մեծ մյուս «Խօսկումն վարուց» գործը⁴:

Մխիթարի հեղինակած այս գործերի վերնագրերն իսկ ցույց են տալիս, որ մյուս մպաստակն է եղել ոչ թե տեսական ուսումնասիրություններ կատարելը, այլ քրիստոնեական դաստիարակության և բարոյականության հարցերը ժողովրդին համարամատչելի բացատրելը: Թեև Մխիթարյան տոկուն աշխատասիրության մարմնավորումն է մեծ «Բաղդիրքը», այն սակայն ևս ավելի շատ հայոց լեզվի բառագանձը ներկայացնող բացատրական բառարան է, ի տարբերություն մյուսից մեկ դար անց հրատարակված «Նոր բաղդիրք հայկազեան լեզուի» կոթողային գործի, ուր բերված են յուրաքանչյուր բառի իմաստային

³ Ռ. Իշխանյան, Հայ գրքի պատմություն, Երևան, 1977:

⁴ Տե՛ս Հայ գիրքը 1512-1800 թվականներին, էջ 427:

գրքերամզները գրաքարում, ինչպես նաև նրանց մասին մատենագրական վկայությունները:

Մխիթարը թեև հայ դասական մատենագրության որևէ գրական հուշարձան կամ երկ չի հրատարակել, սակայն նրա գործունեությունը տևական մի մախապատրաստություն էր Մխիթարյան այդ ծրագրի իրականացման, որի առաջին քայլը դարձավ միաբարակական շարժման ընթացքում ստեղծված և ունիթոական անվանվող հայերենի արհեստական լատինաբան աղճատումներից հայոց լեզուն մաքրելը: Նույն այս նպատակով Մխիթարի ձեռնարկած կարևորագույն քայլերից մեկն էր Ոսկեդարյան շրջանի գրական մեծագույն հուշարձանի՝ Աստվածաշնչի հայերեն թարգմանության լեզվական առումով բնագրային վիճակի վերականգնումը:

1732 թ. Մխիթարը հրատարակում է Չորս Ավետարանները, որին 1733 թ. հաջորդելու էր Աստվածաշնչի հրատարակությունը, որը երկրորդն էր Ոսկանյան հրատարակությունից հետո: Սուրբ Գրքի մախնյաց թարգմանության բնագրի տպագրությունը Մխիթարի հաջորդների ջանքերով իր լրումին էր հասնելու Հ. Հովհաննես Չոհրապյանի (1804 թ.) և Հ. Արսեն Բագրատունու (1860 թ.) հրատարակություններով:

Մխիթարի մահվանից հետո հաջորդող երեք տասնամյակներում ևս շարունակվում է նույն այս ընթացքը հանրամատչելի բացատրական տարբեր գրքերով և կաթոլիկ աստվածաբանության թարգմանական տարբեր հրատարակություններով:

Այս շրջանում նշանակալից երևույթ են Մխիթարյանների գործունեության մեկ կարևոր մասը կազմող քարտեզագրական հրատարակությունները: 1746 թ. տպագրվում է Պատմական Հայաստանի «Երկիր Ավետյաց» անվանվող քարտեզը, որը կցվում է Բաղդադի 1749 թ. լույս տեսած առաջին հատորին, իսկ 1751 թ. լույս է տեսնում ևս մեկ՝ «Աշխարհացոյց» անվանվող քարտեզը⁵:

Նույն այս շրջանում, 1749 թ., լույս է տեսնում և Մխիթարյան առաջին ինքնուրույն ստեղծագործական երկը՝ միաբանության հայրերից Մատթեոս Եվդոկիացու «Վարք Սրբոյն Գրիգորի Լուսատրչի», որը շարադրված է Ագաթանգեղոսի և մի շարք այլ հեղինակների գործերի հետևողությամբ, հոգևոր մեծ ներշնչմամբ և որոշակի գեղարվեստականությամբ⁶:

1748 թ. Մատթեոս և Ղուկաս Վանանդեցիների աշխատասիրությամբ Մխիթարյանները հրատարակում են նաև հայկական կյանքում մեծ ճանաչում ունեցող և իր ակունքներով ընդհանուր արևելյան և մեր հին մատենագրությունից եկող «Էֆիմերտե» անվանվող գուշակողա-հավատալիքային հանրագիտակ գիրքը⁷:

Մխիթարյան հրատարակությունների բնույթը և ուղղվածությունն էապես փոխվում է 18-րդ դարի 80-ական թվականների սկզբից, որը բացատրվում է երկու պատճառներով: Նախ, որ մախորդ տասնամյակները հաստատման, կազմավորման և համապատասխան գիտամտավոր պատրաստության հասնելու շրջան էր միաբանության համար, և երկրորդ՝

⁵ Տե՛ս Հայ գիրքը..., էջ 382, 413:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 393:

⁷ Նույն տեղում, էջ 388:

իրենց հրատարակություններով համամասն պատրաստության մի շրջան էին նրանք առաջ սահմանել նաև հայ ընթերցողի համար:

Իրենց և իրենց ընթերցողների համար այս շրջանն ավարտված համարելով, գրաբարի և ժամանակի Պոլսի բարբառի ու ընդհանուր արևմտահայերենի վրա խարսխված գրական լեզվով, որի կանոնակարգումը պետք է տևեր ավելի քան կես դար, Մխիթարյանները ձեռնամուխ են լինում իրենց հրատարակչական գործունեության երկրորդ աստիճանին, որը պայմանականորեն կարելի է բաժանել չորս ուղղությունների.

ա. կրոնական

բ. հայագիտական

գ. հայ հին գրականության բնագրեր

դ. ուսումնագիտական ձեռնարկներ

Նախորդ շրջանից եկող և հետագայում էլ շարունակվող կաթոլիկ ուղղվածության եկեղեցական գրականությունը պարտավոր էր հրատարակել Հոռմին ենթարկվող կրոնական միաբանությունը: Հաջորդ երեք ուղղությունները սակայն արդեն ծառայում են բացառապես հայագիտությանն ու հայ մշակույթին. արձագանքելով և ժամանակի առաջադրած խնդիրներին ու պահանջներին:

Հայագիտական ուսումնասիրությունների լույսընծայվելն ազդարարվեց Միքայել Չամչյանի «Քերականութիւն հայկազեան լեզուի» (1779 թ.) գործով, որին 1784 թվականից հաջորդելու էին «Հայոց պատմության» երեք սովորածավալ հատորները:

Ընդհանուր և Հայաստանի պատմական աշխարհագրությանը և հնախոսությանը նվիրված Ղուկաս Ինճիճյանի և Ստեփանոս Գիվեր Ազոնցի նշանավոր հատորները սկսվելու էին 1791 թ. տպագրված աշխարհաբար «Աշխարհագրությամբ»:

Նույն ձևով Մկրտիչ Ավգերյանի «Լիակատար վարք և վկայաբանութիւնք սրբոց» տասներկու հատորանոց գործին 1800 թ. նախորդելու էր «Ծաղիկ վարուց սրբոցը», որ ինչպես վերնագրում իսկ ասվում է, ծաղկաքաղ է, այսինքն՝ ընտրողաբար և համառոտ վերաշարադրանքով բերված են Հայ Եկեղեցու կողմից տոնվող սրբերի վարքն ու չարչարանքների և նահատակության պատմությունները:

Հաջորդ ուղղությունը ժամանակի բնագիտական բնույթի ուսումնագիտական ձեռնարկներն էին:

Եվ վերջապես՝ չորրորդ խումբը կազմում են հայ հին և միջնադարյան գրականության բնագրերի հրատարակությունները, որոնցից առաջինը Նարեկացու «Մատյան ողբերգության» աղոթամատյանի տպագրությունն է 1789 թ.: Այս հրատարակության պահպանված շարվածքը տիտղոսաթերթի հետ միասին նույնությամբ վերատպվել է նաև 1795 թ. և տիտղոսաթերթի 1789 թվականը ձեռքով դարձվել 1795: Մխիթարյանները սակայն Նարեկի այս երկու հրատարակություններն իրականացրել են ոչ թե ըստ ձեռագրային օրինակների, այլ վերատպել 1774 թ. պոլսական հրատարակությունից:

Նույն 1789 թ. Մխիթարյանները հրատարակում են նաև Նարեկացու «Երգ երգոցի մեկնությունը», որը նախադրում էր հայ հին գրականության բնագրերի մխիթարյան հրատարակությունների: Գրքի հիշատակարանում ասվում է, որ այն հրատարակվել է ոչ այնքան հնագիոր մի օրինակից: Քանի որ սա հայ մատենագրության բնագրերի մխիթարյան առա-

շին հրատարակությունն էր, ուստի գրքի հիշատակարանում պատկերավոր ձևով ասվում է, որ այս հրատարակությամբ «պարտ է մեզ ոչ միայն բարեխնայիր վաստակատուս լինել, այլև հաւատարիմ աւանդապահս, իսկ վարձս դոյզն աշխատութեան մերոյ՝ շատ համա-րիմք միայն զընթերցանելեացն անձանց օգուտ»⁸:

Նման համեմատությամբ ասվում է, որ մենք ոչ միայն մեր մոր գրված գործերով պետք է այսօրվա վաստակավորները՝ վաստակածները լինենք, այլև մախնայաց գործերի հրատարակությամբ դրանք կորստից փրկելով անցյալի արժեքները պահպանող ավանդապահները՝ մեր վարձը համարելով այս գրքերի ընթերցումից ընթերցողների ստացած օգուտը:

Հաջորդ՝ 1790 թ. տպագրվում են Մխիթար Գոշի առակները:

1793 թվականը թե՛ Վենետիկի Մխիթարյանների հրատարակությունների շարքում և թե՛ ընդհանրապես հայ մատենագրության տպագրության պատմությունում մշանավորվում է Ղազար Փարպեցու «Հայոց պատմության» լույսընծայմամբ: «Բան առ վերծանողս», այսինքն ընթերցողներին ուղղված խոսքում ասվում է. «Ցանկալի ամենայն բանասիրաց ազգիս ճանաչեմք զգործս մերոց մախնեաց և ի մոսս առաւել զգործս պատմագրական», քանի որ պատմագրությամբ մեր անցյալի պատմությունն է ավանդվել, որի իմացությունն առանձնակի մշանակություն ունի⁹:

Նման պատմագիրների հրատարակությունը հպարտություն է յուրաքանչյուր ազգի համար, իսկ մրանց գործերի կորուստը՝ անփոխարինելի կորուստ, ուստի կարևոր է համարվում լույս ընծայել Փարպեցու մամ պատմիչի «Պատմությունը»՝ վերջինիս հեղինակին անվանելով «չայտապատում պատմագիր այնպիսի խոովայույզ բազմայեղիմակ դիպմանց ժամանակի»:

Այնուհետև երեք տարի անց, 1796 թ., Մխիթարյաններն իրականացնում են այնպիսի մի բարդ ու կարևորագույն հրատարակություն, ինչպիսին խորենացում վերագրվող «Գիրք Պիտոյիցն» է: Հինգ ձեռագրերի հիման վրա այս գործի բնագիրը հրատարակության է պատրաստում Վենետիկի Մխիթարյան հայրերից Հովհաննես Զոհրապյանը, որն այնուհետև հրատարակելու էր Աստվածաշնչի հայերեն թարգմանության այնպիսի մի քննական բնագիր, որն այսօր ևս մեծապես ընկած է Աստվածաշնչի գրքերի հրատարակության բնագրերի հիմքում:

Զոհրապյանը «Պիտոյից գրքի» առաջաբանում մկարագրում է այն հինգ ձեռագրերը, որոնց հիման վրա կազմել է այս հրատարակության բնագիրը: Այս առաջաբանը կարևորվում է նաև հայ բնագրագիտության պատմության տեսանկյունից, քանի որ նրանում արտացոլվել են Մխիթարյանների ժամանակի բնագրագիտական ըմբռնումները:

Զոհրապյանն ասում է, որ իր օգտված հինգ ձեռագրերից առաջինը, որն էր «չափաւոր հնութեամբն և ընտրեալագոյն ուղղագրութեամբ, յորդորագոյն արար գմեզ ի ձեռնարկութիւն գործոյս» էր գրուած երեքտասաներորդ դարու»¹⁰: Այսպիսով այս գործի բնագիրը կազմելուն նրան մղած ձեռագիրը 13-րդ դարի ընտիր մի ընդօրինակություն է եղել, որն էլ

⁸ Նույն տեղում, էջ 630:

⁹ Նույն տեղում, էջ 671:

¹⁰ Նույն տեղում, էջ 715:

ծառայել է որպես հիմք: Բուն բնագիրն ըստ այս ձեռագրի է կազմել, մնացյալների տարընթերցվածները մշտնապես տողատակում, և հիմք ձեռագրի միայն ակնհայտ գրչագրական սխալների և վրիպումների դեպքում է, որ դիմել է մյուսներին և ուղղել նրանցով:

Մխիթարյան հրատարակությունների որակական այս փոփոխությունն առաջադրում է մեկ տպագրական մոր խնդիրներ և սեփական տպարանի հիմնում: Ահա այս պատճառով 1790-ական թվականներից միաբանությունը որոշում է սեփական տպարանը ստեղծել: Քանի որ Մխիթարյան հրատարակություններ, ինչպես ասացինք, տպագրվում էին Ամստերդամի Բորտոլիի տպարանում, վերջինս որպեսզի չգրկվի Ս. Ղազարի հրատարակությունների եկամտից, ամեն կերպ խոչընդոտում է սեփական տպարան ունենալու Մխիթարյանների ծրագրին: Հարցն անգամ դատավարության է հասնում, և վենետիկի իշխանությունները, որպես փոխադարձ հաշտության միջոց, առաջարկում են, որ Ս. Ղազարում գործել սկսող տպարանն իր հրատարակությունների վրա դնի Բորտոլիի տպագրական մշանը, ըստ երևույթին մեկ որոշ շահաբաժին հատկացնելով յուրաքանչյուր հրատարակությունից¹¹:

Նարեկացիով, Գոշով, Փարպեցիով և Խորենացիով սկսված հայ հին գրականության հրատարակության այս խոստումնալից ընթացքը, սակայն, միաժամանակ դադարում է 1796 թ. «Գիրք Պիտոյիցի» հրատարակությունից հետո:

1807 թ. հրատարակվում է Հովհան Օձնեցու «Ընդդէմ երևութականաց» ճառը, իսկ 1812 թ.՝ Լամբրոնացու «Ատենաբանությունը»: Մխիթարյան միաբանությանը մեծ հուշակ են բերում 1818 թ. Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնի» և 1822 թ. Փիլոն Եբրայեցու երեք գործերի հրատարակությունը, որոնց բնագրերը կորել էին և դրանք պահպանվել էին միայն հայերեն թարգմանությամբ: Եվ շնորհիվ Մխիթարյանների գրաբարին զուգահեռ լատիներեն թարգմանության, այս գործերը վերահայտնվում են գիտական աշխարհի համար:

18-րդ դարի վերջին սկսված և ընդհատված հայ դասական մատենագրության բնագրերի հրատարակությունը վերսկսվում է սակայն միայն 1824 թվականից և մինչև 1830 թ. լույս են ընծայվում Եզնիկի, Խորենացու և Եղիշեի երկերը, որոնք մինչ այդ, սակայն, արդեն ունեցել էին իրենց տպագրություններն այլ հրատարակիչների կողմից:

1830-40-ական թվականները, սակայն, կարելի է համարել հայ հին գրականության բնագրերի մխիթարյան հրատարակությունների ամենաեռուն շրջանը:

Այս իրողությունը պայմանավորված էր հետևյալ երկու հանգամանքներով: Առաջին՝ ուսումնասիրական-հետազոտական աշխատանքներով տեղական մաթապատրաստությամբ և երկրորդ՝ բնագրագիտական հրատարակություններն իրականացնելու համար առավել ընտիր հին ձեռագրեր գտնելու ձգտմամբ: Նախապատրաստական այս շրջանի մասն էին կազմում մեկ գրաբարի ու աշխարհաբարի քերականությունների հրատարակումը, բառարանագրական աշխատանքները և պատմագիտական ուսումնասիրությունները, ինչպես որ Չամչյանն էր «Հայոց պատմության» սկզբում «Պատմագիրք հայոց» խորագրի ներքո ներկայացնում իր ժամանակ հայտնի պատմիչներին և նրանց գործերը,

¹¹ Տե՛ս Գաբեզին Լևոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1958, էջ 160-161:

մման թվարկումն իսկ հայ մատենագրության պատմությունն կազմելու առաջին ամփոփ փորձերից մեկն էր:

Երկրորդ գլխավոր պատճառը սակայն, ինչպես ասացինք, բնագրային հրատարակություններն իրականացնելու համար անհրաժեշտ ձեռագրերի ձեռքբերումն էր: Սեփական Մատենադարան ունենալն առանձնակիորեն էր կարևորվում Մխիթարյանների համար, քանի որ նրանք կտրված էին բուն երկրից և հայկական միջավայրից, որով և հետո էին մաս հայկական վանքերում և տարբեր հավաքածուներում պահվող ձեռագրերից:

Ս. Ղազարում հայկական ձեռագրերի հավաքման ընթացքի մասին միաբանության հայրերից Տաճատ Յարոմյանը գրում է. «1750-ին արդեն կարելի է 250 ձեռագիրներ հաշուել: Դարում վերջաւորութեան թիւը կբարձրանայ 900-ի, իսկ 1850-ին՝ 1200-ի: 1900-ին՝ շուրջ 2000: Այսօր շուրջ 5000 ընտիր ձեռագիր հատորներու հասաքածոյ մը ունին Վեհնտիկի Մխիթարեանները»¹²:

Մխիթարյան ձեռագրատան և մատենադարանի ձևավորման մասին հետաքրքիր շատ տեղեկություններ կան միաբանության դիվանում, որոնք իր մի շարք հոդվածներում հրատարակել է հոգեւոյս աքբահայր Բ. Սահակ Ծննճեմյանը: Ըստ նրա՝ Ս. Ղազարի ձեռագրային հավաքածուի բուն միջուկը ձևավորվել է Ստեփաննոս Մելքոնյանի աքբահայրության շրջանում (1750-99 թթ.)¹³: 1752 թ. Մելքոնյան աքբահոր հանձնարարությամբ Ղուկաս Սեբաստացին մեկնում է Հայաստան՝ ձեռագրեր ընդօրինակելու, սակայն վերահաս մահը թույլ չի տալիս իրականացնելու այդ ծրագիրը: Ինչպես Ղուկաս Սեբաստացին էր գրում իր միաբանակից եղբայրներին, ինքը գնում է «վասն պէս պէս զմնութեանց հնութեան ի պէտս հասարակութեան», իսկ ուղևորության ընթացքում ուղարկած մամակներից մեկում ասում է, թե «վասն ձեռագիր գրեանց որչափ կարն է՝ հոգան»¹⁴: Նույն այս մպատակով այնուհետև ուղարկվում է Գևորգ Պաղտատյանը: Նաև Կ. Պոլսի Պատրիարք Գրիգոր Պասմաճյանի (1764-1773 թթ.) թույլտվությամբ Մխիթարյանները ընդօրինակում են Պատրիարքարանի ընտիր ձեռագրերը:

Դիվանագիտական վավերագրերը վկայում են, որ Մխիթարյանները ձգտում էին Պատմական Հայաստանի վանքերից Ս. Ղազարում ի մի հավաքել հայկական ձեռագրերն այնքանով, որքանով ներում էին իրենց միջոցները՝ առաջնորդվելով ընտրողության սկզբունքով, որի հիմքում ընկած էին երեք չափանիշներ՝ ձեռագրի հնությունը, գրչության արվեստը և այն, թե տվյալ ձեռագրի պարունակած միավորները միաբանության այլ ձեռագրերում կա՞ն, թե ոչ: Միաժամանակ, եթե անհրաժեշտ բնագիրը պարունակող ձեռագիր հնարավոր չէր ձեռք բերել, ապա աշխատում էին ստանալ դրա ընդօրինակությունը:

Հայաստան՝ անցյալի արժեքները որոնելու մեկնած Մխիթարյանները քանի որ չէին կարող ընդօրինակել իրենց հանդիպող բոլոր ձեռագրերը, ուստի մույն այս մպատակով նրանք իրենց իջևանած վանքերից ուղարկում էին այդ ձեռագրերի պարունակած նյութերի ցանկը և դրանց սկսվածքները, որպեսզի պարզ լինի, թե որ խմբագրմանն են պատկանում և որքանով են համընկնում Մխիթարյանների ունեցած օրինակներին, և ըստ այդմ էլ Ս.

¹² Հ. Տաճատ Յարոմյան, Սուրբ Ղազար կղզին մայրավանք Մխիթարեաններում, Ս. Ղազար, 1989, էջ 30:

¹³ Տե՛ս Հ. Ս. Ծննճեմյան, Հ. Միքայել Զամչեան և իր Հայոց պատմությունը, Ս. Ղազար, 1982:

¹⁴ Հ. Ս. Ծննճեմյան, Հ. Ներսես Սարգիսեանի ուղևորությունը դէպի Փոքր և Մեծ Հայք, Ս. Ղազար, 1989, էջ 6:

Ղազարից գրված մամակներում ասվում էր, թե այդ նյութերից որոնք ընդօրինակեն և որոնք՝ ոչ:

Որքան էլ որ հարստանում էր Ս. Ղազարի մատենադարանը, որևէ արժեքավոր բնագիր այնուամենայնիվ հանկարծ ուշադրությունից դուրս չթողնելու համար 19-րդ դարի առաջին կեսում ևս Մխիթարյաններն առաջնորդվում էին նույն այս սկզբունքով: Այդ ժամանակ, քանի որ արդեն կազմվել էր Ս. Ղազարի ձեռագրերի նկարագրության ցանկը, նրանք արդեն ոչ թե միաբանությանն էին ուղարկում իրենց տեսած ձեռագրերի նկարագրությունները, որպեսզի այնտեղից ասեն, թե որ գործն է պակասում Ս. Ղազարում, որ հենց դրանք ընդօրինակվեն, այլ Մխիթարյանների ձեռագրային միավորների վերցված ցուցակով իրենք էին տեղում համեմատում և ընդօրինակում ցուցակում չնշված գործերը:

Միաժամանակ, Մխիթարյանների ունեցած բնագրերը եթե հարստանում էին մի մոր գործով, վերջինիս մասին իսկույն տեղեկացնում էին Հայաստան մեկնած միաբաններին, որպեսզի նրանք իրենց ընդօրինակությունները կատարելիս դա նկատի ունենային և ուժերն առաջին հերթին կենտրոնացնեին այն գործերի վրա, որոնք Ս. Ղազարում չկային: Այս առումով հատկանշական է երիտասարդ Ալիշանի և Արևմտյան Հայաստան մեկնած Ներսես Սարգիսյանի 1840-ական թթ. մամակագրությունը¹⁵:

Հայ մատենագրության Մխիթարյան հրատարակությունները պայմանավորված էին նաև հայկական միջավայրում նրանց հանդեպ եղած պահանջով ու հետաքրքրությամբ, որն էլ իր հերթին առաջ է բերում դրանց հրատարակությունը հովանավորելու պատրաստականություն:

Հայ պատմագիրների երկերի հրատարակությունը վերսկսելու հարցում վճռորոշ է լինում Կ. Պոլսի հայ ամիրայական դասի նշանավոր տոհմերից Տյուզյան գերդաստանի անդամների ցանկությունը՝ տպագրված տեսնել նախնյաց մատենագրությունը: 1817 թվականին Պոլսից միաբանությանն ուղղված Հակոբ Տյուզյանի մամակում ասվում է. «զգործս հարցն մերոց նախնեաց տպեսչիք սկսեալ ի գործոց Լուսաւորչին մերոյ մինչև ցվերջնայն»¹⁶:

Նրանք պատրաստականություն են հայտնում հոգալ նաև այդ հրատարակությունների ծախսերը և հատկացնում են մի որոշ գումար:

Տյուզյանների կատարած այս առաջարկի ժամանակ Մխիթարյանները ծրագրում էին «Մատենագրութիւնք նախնեաց» շարքով հրատարակել նրանցից յուրաքանչյուրի ամբողջական գործերը, որն ահռելի աշխատանք էր թե՛ նյութի ընդգրկման առումով և թե՛ յուրաքանչյուր գործի անադարտ հին ձեռագրերը գտնելու պատճառով: Ուստի միաբանության արքահայր Սուրբիա Սոմայլյանը որոշում է մինչև այդ մատենաշարի սկսելը «Հնտիր մատենագիրք» խորագրով հրատարակել մեր դասական մատենագիրներից յուրաքանչյուրի բուն գլխավոր գործը:

¹⁵ Այս մասին տես՝ Հ. Ս. Ծեմճեմեան, Հ. Ներսես Սարգիսեանի ուղեորությունը դեպի Փոքր և Մեծ Հայք, Ս. Ղազար:

¹⁶ Հ. Ս. Ծեմճեմեան, Մովսես Խորենացիի Պատմութեան վեմետիկեան տպագրութիւնները, «Բազմավեպ», Ս. Ղազար, 1991, էջ 22:

Նման որոշման պատճառը ոչ միայն այն էր, որ այդպիսով շարքը կունենար համեմատաբար փոքր ընդգրկում, այլև ոչ պակաս կարևոր էր, որ այդպիսով անհամեմատ կնվազեր այն գործերի թիվը, որոնց ձեռագրային ընտիր օրինակները միաբանությունը չուներ: Ինչպես որ, օրինակ, խորենացու «Հայոց պատմության» հրատարակության համար անհրաժեշտ ձեռագրերը կային, իսկ Պատմահորը վերագրվող «Աշխարհացույցին»¹⁷ ոչ, որի համար, ինչպես կոեսենսը, խորենացու ամբողջական գործերի հատորը բավական ուշանում էր:

Այսպիսով, ըստ Սոմայայանի, մեծ որոշման պատճառը ոչ միայն բնագրային խնդիրների պատճառով շարքի ուշացումն էր, այլև եվրոպական փորձի հաշվառումը¹⁷: Ինչպես որ եվրոպացիներն են ընդհանուր հասարակական հետաքրքրությունը բավարարելու համար առանձին շարքով տպագրում իրենց մշտնապես հեղինակների գլխավոր գործերը, մյուսները, որոնց հետաքրքրությունների ավելի մեղ շրջանակ էին ընդգրկում, առանձին այլ հրատարակություններով թողնելով հասարակության ավելի մեղ շրջանակին, այնպես էլ Սոմայայանն ինքն է ցանկանում վարվել: Ծեշտելով եվրոպացիների օրինակով հրատարակելիք շարքի կարևորությունն ազգային կյանքում, մահ ասում է, որ դրանց հրատարակությամբ ցանկանում է, «զի մի՛ հայ մանկտին ընդ երկար ի կարևորացն գրկեսցի»¹⁸:

«Ընտիր մատենագիրք» այս շարքով առաջինը լույս է տեսնում Եզնիկի «Եղծ աղանդոցը» 1826 թվականին, որի բնագիրը վաղուց էր պատրաստ տպագրության: Մխիթարյան վանական ավանդությամբ ասվում է, որ այս հրատարակության բնագիրը կազմել է Հ. Արսեն Բագրատունին, սակայն, ինչպես մշտն է ժենճեմյանը, մեծ պնդումը հավաստող դիվանական որևէ վավերագիր չկա¹⁹:

Հաջորդ տարի, 1827 թ., չորս ձեռագրերի համեմատությամբ լույս է տեսնում խորենացու «Հայոց պատմությունը», որն այս շարքի երկրորդ գիրքն էր: Հաջորդող տարիներին թե՛ այս շարքով և թե՛ առանձին հրատարակություններով Մխիթարյանները տպագրում են. 1830 թ.՝ Բարսեղ Կեսարացու և Սևերիանոս Ամսիոքացու ժառերն ու Ծնորհալու «Թուղթ ընդհանրականը» և բանաստեղծությունները, 1832 թ.՝ Զեմոր Գլակի և Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն Տարօնոյ», Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարությունը», Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունը» և Ծնորհալու «Նամակները», 1833 թ.՝ «Մատենագրութիւնը մախանաց» սկսված շարքով մեկ գրքում Կորյունի, Մամբրե Վերծանողի, Դավիթ Ամհաղթի երկերը և Հովհան Օձնեցու «Մատենագրութիւնը» հատորը ու Սիրաքի գիրքը, 1835 թ.՝ Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը», 1836 թ.՝ Եփրեմ խորի Ասորու քառահատոր «Մատենագրութիւնը» և Հովհան Մանդակունու ժառերը, 1838 թ.՝ Գրիգոր Տղայի թղթերը և բանաստեղծությունները, Լամբրոնացու թղթերը, «Մատենագրութիւն մախանաց»-ով Եղիշեի գործերը և Լուսավորչին վերագրվող «Հաճախապատում ճառերը»,

¹⁷ Նույն տեղում, էջ 32:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում, էջ 33:

1840 թ.՝ դարձյալ «Մատենագրությունը»-ով Նարեկացու գործերը, 1842 թ.՝ Հեթում Պատմիչի «Պատմություն թաթարաց» և Ալեքսանդր Մակեդոնացու կյանքի պատմությունը²⁰:

Որ այս գրքերը սպասված հրատարակություններ են եղել և մեծ պահանջարկ ունեցել, վկայում է հետևյալ փաստը: Ներսես Սարգիսյանը Արևմտյան Հայաստան իր ճանապարհորդության ընթացքում 1843 թ. հասնելով Ջմյուռնիա, տեղի գրավաճառին է տալիս Մխիթարյան այս հրատարակություններից, և ինչպես ինքն է մշում մամակներից մեկում, մի քանի օրվա ընթացքում վաճառվում է երեսուն օրինակ Եղիշեի, քսան օրինակ Եզնիկի, տասական օրինակներ խորենացու և Ագաթանգեղոսի գործերից, տասն օրինակ Օմորհալու թղթերից, երեք օրինակ խորենացու մեծ հատորից՝ «Մատենագրությունը»-ից, հինգ օրինակ՝ խորենացու «Հայոց պատմության» իտալերեն թարգմանությունից և երկու օրինակ՝ ֆրանսերեն թարգմանությունից²¹:

«Բազմավեպի» հրատարակության առաջին տարում, 1843 թ., «Մատենագրությունը մախմեաց» շարքով լույս են տեսնում խորենացու և մրան վերագրվող գործերը, 1844 թ.՝ Արիստակես Լաստիվերտցու «Հայոց պատմությունը», և 1847 թ.՝ Ներսես Լամբրոնացու «Պատարագի մեկնությունը»:

Հայ դասական երկերի հրատարակությունն այնուհետև դադարում է մինչև 1862 թ., երբ Ալիշանի աշխատասիրությամբ լույս է տեսնում Վարդան Արևելցու «Պատմությունը», ապա և 1865 թ.՝ Կիրակոս Գամառլեցու «Հայոց Պատմությունը»: Հիշյալ տասնհինգ տարիների ընթացքում վերստին Ալիշանի աշխատասիրությամբ հրատարակվում են միայն հայ միջնադարյան մատենագրության մի շարք մանր երկեր՝ «Սոփերք հայկականը» շարքի քսաներկու գրքույկներով:

Տասնհինգ տարի հայ դասական մատենագիրների երկերի հրատարակությունների դադարեցումը Ա. Երիցյանը բացատրում է ժամանակի աքքահայր Հյուրմուզյանի կարգադրությամբ այն պատճառաբանությամբ, թե մնացյալ այդ հեղինակները չեն ընդունել Քաղկեդոնի ժողովը, իսկ Վարդան Արևելցու և Կիրակոս Գամառլեցու Պատմությունները (մկատի ունի Ալիշանի երկու հրատարակությունները) մույն պատճառով տպագրվել են վիճելի ծանոթագրություններով:

Երիցյանը թեև դավանաբանական տարբերություններով է բացատրում հրատարակությունների այս ընդհատումը, Մխիթարյանները, սակայն, այն պատճառաբանում են իրենց ունեցած բոլոր միջոցները, ինչպես մաս ստեղծագործական ողջ եռանդը «Բազմավեպի» հրատարակությանը տրամադրելով ու նվիրելով²²:

Իսկ թե որքան ծանր և աշխատատար էր դասական մատենագիրների հրատարակությունը «Մատենագրություն մախմեաց» շարքով, երևում է հենց Պատմահոր օրինակով: Ինչպես ասացինք, «Հայոց պատմություն» «Ընտիր մատենագիրք» շարքով հրատարակվել էր դեռևս 1827 թվականին: Այս տպագրության համար օգտագործվել էին չորս ձեռագրեր: 1843 թ. հրատարակության ժամանակ բնագիրը կազմելիս ավելացվել են ևս երկու ձեռա-

²⁰ Ըստ ժամանակագրական ընթացքի, այս տվյալները վերցրել ենք Հ. Դավթյանի «Հայ գիրքը 1801-1850 թվականներին» գրքի մատենագիտական մկարագրություններից:

²¹ Հ. Ս. Ժեմեմեան, Հ. Ներսես Սարգիսեանի..., էջ 11:

²² Այս մասին տե՛ս Հ. Ս. Ժեմեմեան, «Բազմավեպ»-ի ծնունդը, «Բազմավեպ», Ս. Ղազար, 1994, էջ 54:

Այսպես, Սուրբաս Սոմայլանը 1823 թ. Լոնդոնում և Փարիզում երբ հանդիպում է եվրոպական մի շարք գիտնականների հետ, գալիս է այն եզրակացության, որ Հայաստանի մասին մրանց ունեցած սխալ պատկերացումները ցրելու համար հարկավոր է շտապ կերպով ձեռնամուխ լինել հայ մատենագրության հրատարակությանը:

Ս. Ղազարից Կ. Պոլիս՝ Հ. Կարապետ Եսայանին 1823 թ. գրված մամուլում ասում է, որ Հնդկաստանում ինքն ավելի է հաստատվել իր այս համոզման մեջ, քանի որ տեղի եվրոպական գիտնականները մախ զարմանում, ապա և մեղադրում են հայերին՝ լսելով, որ իրենց հին մատյանները դեռևս չեն հրատարակել: Նման մեղադրանքներն այնքան են ազդում մրա վրա, որ ինքը Հնդկաստանում ձեռք բերած դրամների ու զարդերի իր հավաքածուն երկու հազար դուրուշով վաճառում է և հավաքված դրամը հատկացնում Ագաթանգեղոսի հրատարակությանը²⁵:

Հ. Հարություն Ավգերյանին նույն 1823 թ. գրված մամուլում Փարիզի համալսարանի արևելյան լեզուների դասախոս Ծահան Զրպետը ևս Մխիթարյաններին խրախուսում է հայ մատենագրության հրատարակության իրենց ջանքերի համար: Ըստ մրա Եվրոպայում մեծ հետաքրքրություն կար հայ մատենագրության հանդեպ, և եթե Մխիթարյանները որոշեին հրատարակել հայ հին գրականության բնագրերը, ըստ այբեմական կարգի կամ ժամանակագրական ընթացքի մի ցուցակ ներկայացնելով, ապա շատ համալսարաններ, գրատներ ու անհատներ, այդ թվում և եվրոպական իշխաններն ու թագավորները կցանկանային ձեռք բերել տպագրվելիք այդ գործերը: Ցանկացողների թվում մաս թագավորներին մշտելով, մա ըստ երևույթին նկատի ունի Բելգիայի թագավորի օրինակը, որին երբ Մխիթարյանները նվիրում են 1833 թ. հրատարակված Ծնորհալու «Հաւատով խոստովանի» քսանչորս լեզվով հրատարակությունը, թագավորը Մխիթարյաններին պարգևատրում է հատուկ շքանշանով²⁶:

1829 թ. իտալերենով լույս է տեսնում այդ ժամանակ արդեն միաբանության աբբախյոր դարձած Սոմայլանի «Պատկեր հայկական դպրութեան» (Quadrodella letteratura armenia) աշխատությունը, որի գրաբար բնագիրը չի տպագրվել և չի պահպանվել: Ինչպես գրում է Ժենյա Քալամթարյանը՝ «Այն ավելի շատ համարվում է մատենագրական ցանկ հեղինակների համառոտ կենսագրություններով ու բանասիրական ծանոթություններով»²⁷:

Հայ մատենագրությունն աշխարհին ներկայացնելու մտահոգությունն ունեցող Սոմայլանին այս գործը գրելուն ըստ երևույթին մղել է Ծահան Զրպետի առաջարկը, և մա ստեղծել է մատենագիտական թվարկման բնույթի մի շատ ընդարձակ ցանկ: Հօգուտ այն տեսակետի, որ այս գործը ոչ թե որպես գիտական ուսումնասիրություն է գրվել, այլ նպատակ է ունեցել Եվրոպային ներկայացնելու հայ գրականության պոփոխ մատենագրությունը, վկայում է և այն համագամանքը, որ լույս է տեսել մրա միայն իտալերեն թարգմանությունը, իսկ հայերեն բնագիրը ոչ միայն լույս չի տեսել, այլև անգամ չի պահպանվել: Սոմայլանը լինելով Ս. Ղազարի աբբախյորը, առանց որևէ դժվարության կարող էր հրատարակել իր

²⁵ Նույն տեղում, էջ 29:

²⁶ Գ. Լևոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, էջ 195:

²⁷ Ժ. Քալամթարյան, Հայ գրականագիտության պատմություն, Երևան, 1986, էջ 193:

գործը, կամ վերջինս գոնե կախապահվել միաբանության դիվանում, ինչպես որ պահպանվել են անգամ հրատարակված շատ գրքերի ձեռագրերը:

Հատկանշական է, որ հայ մատենագրության հուշարձանների թարգմանությունը Մխիթարյանները սկսում են խորենացու «Հայոց պատմությամբ», որն առավել համապարփակ և ընդգրկում պատկերացում էր տալու հայ ժողովրդի անցյալ փառքի մասին:

1836 թ. Փարիզի լեզվագիտական դպրոցի հայերենի ուսուցիչ Լը Վալյան Դը Ֆլորի-վալը Փարիզում ֆրանսերեն թարգմանությամբ հրատարակում է խորենացու «Հայոց պատմությունը», որը Մխիթարյանները չեն հավանում՝ գտնելով, թե կամ իմաստային վրիպումներ և որ խորենացու ոճը չի պահված:

1839 թ. ֆրանսիացի գիտնականը հրավիրվում է Ս. Ղազար, ուր Մխիթարյանների հետ համատեղ կատարված իմաստային ճշտումներով իրականացնում է Պատմահոր Մատյանի ֆրանսերեն մոր թարգմանությունը:

Թարգմանության ընթացքում Մխիթարյանների տված բացատրությունները կարևորվում են մեծ խորենացու բուն բնագրի մեկնաբանության և ճիշտ հասկանալու տեսանկյունից: Այսօր ևս որոշակի տարրընթերցվածների տեղիք է տալիս Պատմության առաջին գրքի «Պատմություն Հայոց Մեծաց» վերնագիրը: Վերստին փորձեր են արվում այն մեկնաբանելու որպես «Մեծ Հայքի պատմություն»:

Այս հարցում բավական ուսանելի է Արսեն Բագրատունու դիրքորոշումը: Գրաբարի և ֆրանսերենի փայլուն գիտակը չի համաձայնվում Վալյանի «Grande Armenie» թարգմանությանը՝ ասելով, որ այն ենթադրում է մեծ «Petite Armenie» և զետ բազում քննութեանց ընտրեաց, մանաւանդ թէ հարկ համարեցաւ դնել «Noble Armenie»²⁸:

Վենետիկի Մխիթարյանները բնականաբար առանձնակիորեն էին կարևորում Ս. Ղազարի իտալերեն հրատարակությունները, և 1841 թ. խորենացու Պատմությունը լույս է ընծայվում մեծ իտալերեն թարգմանությամբ: Հայ հին մատենագրության գրաբար բնագրով և թարգմանությամբ այս հրատարակություններն այնպիսի տպավորություն են թողնում Եվրոպայում, որ Սարդիանիայի թագավորն անգամ ծրագրում է հովանավորել հայ հին գրականության իտալերենի թարգմանությունները²⁹:

Հայ ձեռագրային աշխարհի միջոցով հայ մշակույթը Եվրոպային ներկայացնելը միաբանության անդամների համար դարձել էր Մխիթարյան առաքելության խորհրդանիշը, որը լավագույնս արտահայտվել է մույն 1840-ական թթ. սկզբին դեպ Հայաստան ուղևորված Հ. Ներսես Սարգիսյանի գրած մամակներից մեկի այն տողերում, ուր ասում է, թե ինքն ամենուր հետամուտ է լինում հայկական ձեռագրերի հավաքմանը և պակասող բնագրերի ընդօրինակությանը, որովհետև իր իղձն է, որ «մատենադարան սրբոյն Ղազարու պատգամատու լիցի իմաստունն Եւրոպայ և համօրէն ազգիս զամենայն հմութեանց պատմականացն և վարդապետականաց առ ի մախնեաց մերոց հասելոց առ մեզ»³⁰:

²⁸ Տե՛ս Հ. Ս. Բենեմենա, Մովսես խորենացիի պատմութեան..., էջ 37:

²⁹ Նույն տեղում, էջ 40:

³⁰ Հ. Ս. Բենեմենա, Հ. Ներսես Սարգիսեանի ուղևորութիւնը, էջ 9: